



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(56)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

**Պ. Բ. ՇԵԼԼԻԻ «ՉԵՆՉԻ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ XXI-ՐԴ ԴԱՐԻ
ԸՆԹԵՐԳՈՂԻ ԱԶՔԵՐՈՎ**

ՍԻՐԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**«ՊԵՐՍԻ ՇԵԼԼԻ, արթնատ»
Պ. Բ. ՇԵԼԼԻ**

Հիմնաբառեր՝ ռոմանտիզմի ժամանակաշրջան, չարի և բարու պայքար, ողբերգություն, ինցեստ, բռնակալ

Հոդվածում անդրադարձ է կատարվել ռոմանտիզմի ժամանակաշրջանի ներկայացուցիչ Պ. Բ. Շելլիի գրականագիտական հայացքներին՝ կենտրոնանալով «Չենչի» ողբերգության գաղափարախոսության վրա: Ողբերգության առանցքային խնդիրները ներկայացվում են XXI-րդ դարի իրողությունների լույսի ներքո:

Վերլուծության հիման վրա հեղինակը եզրակացնում է, որ ողբերգության մեջ արձարձված թեմաներն արդիական են նաև XXI-րդ դարում՝ մասնավորապես կենտրոնանալով լույսի ու խավարի հավերժական պայքարի, ընտանեկան կոնստրուկտների քայքայման և այդ համատեքստում բռնության զրի դարձած կնոջ ծայնին անհաղորդ մնալու արատավոր երևույթի վրա:

Արագ զարգացող աշխարհում, որտեղ գրեթե բոլոր բնագավառներում փոփոխությունները կատարվում են կայծակնային արագությամբ, մարդիկ հաճախ ձգտում են քայլել ժամանակին համընթաց՝ դառնալով նոր միտումների կրողն ու ջատագովը: Այս համատեքստում բացառություն չէ նաև XXI-րդ դարի ընթերցողը, որն առավելապես հակված է ընթերցել այն, ինչ նորաճ է, քննարկվող, բեսթսելլեր է կամ արձարձում է ժամանակի ամենաարդիական, խոցելի և զգայուն թեմաներն ու խնդիրները: XXI-րդ դարի ընթերցողը գրքից կարծես պահանջում է խոսել իր հետ, ուղղություն ցույց տալ, մոտիվացնել, լուծումներ հուշել և այլն: Եվ որքան էլ նրան թվա, որ այս ամենը կարելի է գտնել միայն մեր օրերում տպագրված գրականության մեջ, միևնույնն է, փորձառու ընթերցողը գիտե, որ դասական գրականության ամեն մի գոհար իր տողերի մեջ խնամքով պահում է հենց այն, ինչն արդիական է բոլոր ժամանակներում: XXI-րդ դարի մի շարք արդիական խնդիրների յուրահատուկ մեկնաբանության հզոր շտեմարան է Պ. Բ. Շելլիի «Չենչի» ստեղծագործությունը, որում Շելլին՝ ռոմանտիզմի ժամանակաշրջանի

գրողին բնորոշ ոճով, արժարժել է այնպիսի թեմաներ, որոնք անտարբեր չեն թողնի նույնիսկ ամենապահանջկոտ ընթերցողին: Գրողը հմտորեն հյուսել է չարի ու բարու, խավարի և լույսի հավերժական պայքարի մեղեդին, համակցել այն ընտանեկան կոնստրուկտների քայքայման և այդ համատեքստում ընտանեկան բռնության զոհ դարձած կնոջ լալահառաչ ձայնին անհաղորդ մնալու արատավոր երևույթի հետ: Խնդիրներ, որոնք արդիական են նաև այսօր:

Չարի ու բարու կամ խավարի և լույսի պայքարը հավերժական է: Այս մասին խոսվում է գրեթե բոլոր ժամանակաշրջաններում գրված գործերում կամ բանավոր կերպով փոխանցված գրույցներում: Այս անհավասար պայքարին Շելլին անդրադարձել է իր «Չենչի» ողբերգության մեջ: Իրեն անվանելով աթեիստ՝ Շելլին փորձում է արտահայտել իր գայրույթն ու վրդովմունքը կրոնի և առհասարակ իշխանության հանդեպ: Իր կրոնական հայացքների պատճառով Շելլին բազմիցս բախվել է հասարակական, ինչպես նաև իշխանական կոշտ վերաբերմունքին: Ռոմանտիզմի ժամանակաշրջանում՝ XVIII-րդ դարի վերջից մինչև XIX-րդ դարի կեսերը, Արևմտյան քաղաքակրթության մեջ ընդունված էր մարդուն արժանավոր և բարեպաշտ համարել այն դեպքում, երբ նրան այդպիսին էր համարում եկեղեցին կամ հոգևորականը: Ուստի պատահական չէ, որ Շելլիի պոեզիայի մի հոծ մասը գաղափարապես հիմնված է աշխարհի մասին մանիքեության տեսության վրա: Այս տեսության հիմքում խորհրդանշականորեն ընկած է երկու բարոյական սկզբունքների՝ Լույսի և Խավարի միջև շարունակ ընթացող պայքարի միջոցով արտահայտվող դուալիստական ուսմունքը, որն, ըստ էության, հուշում է երկու հակադիր բևեռների գոյության մասին:

Հատկանշական է այն, որ Շելլիի՝ աշխարհի մասին մանիքեական պատկերացման մեջ չարի գոյության հեգնանքն իր իսկ ոչնչացման սերմերը պարունակելու մեջ է: Պ. Բ. Շելլիի հայացքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ նրա փիլիսոփայության մեջ առկա են և՛ նյութապաշտական, և՛ իդեալիստական տարրեր:

Լինելով աթեիստ՝ նա նաև պանթեիստ էր և աստվածացնում էր բնությունը: Շելլին համարում էր, որ բնությունը ներդաշնակ է, մինչդեռ սոցիալական հարաբերությունների մեջ մշտական աններդաշնակություն է տիրում: Շելլիի կարծիքով բռնակալությունն ու կրոնական կազմակերպությունները միշտ էլ սերտորեն փոխկապակցված են եղել: «Թագուհի Մաթ»-ում, «Իսլամի ապստամբություն»-ում և «Ռոսալինդ և Հելեն»-ում թագավորները և քահանաները ներկայացվում են որպես միավորված դաշնակիցներ, որոնք ճնշում են աշխարհին:

Չնայած դարաշրջանների տարբերությանը՝ եկեղեցու, կրոնի և իշխանության դերը մեծ է անհատի կյանքում նաև այսօր: Կրոնական այս կամ այն գաղափարախոսության կրողը լինելը կամ չլինելն անհատի կյանքում հաճախ ունենում է վճռորոշ դեր: XXI-րդ դարի ընթերցողը, առնվազն հայ ընթերցողը, գիտի, թե ինչ կտտանքների կարող է ենթարկվել հասարակության, նույնիսկ մերձավորների կողմից նրանց կրոնական կամ քաղաքական հայացքները չկիսելու համար: Սա ավելի ընդգծված է դառնում կրոնական ոչ հիմնահոս ուղղությունների և հայ երիտասարդության այս կամ այն կրոնական կազմակերպությանը հարելու պարագայում: Ի տարբերություն Շելլիի ապրած կամ ներկայացրած ժամանակաշրջանի՝ մեր օրերում բացի ֆիզիկականից, հոգեբանական ճնշումների և հետապնդումների, քաղաքական և կրոնական հայացքների շահարկման արդիական և լայնորեն կիրառվող հարթակ է նաև համացանցը, մասնավորապես՝ սոցիալական կայքերը: Այս համատեքստում է, որ ռոմանտիզմի ժամանակաշրջանի ներկայացուցչի՝ Շելլիի ստեղծագործությունը կարող է XXI-րդ դարի երիտասարդ և համարձակ ընթերցողին հոգեհարազատ լինել՝ այդ ստեղծագործություններում արծարծված թեմաների շնորհիվ: Կարելի է արձանագրել, որ փոխվել է պայքարի ձևն ու միջոցը, սակայն հասարակական հիմնական և առանցքային խնդիրները գրեթե նույնն են:

Արդիական է նաև «Չենչի» ողբերգության առանցքային թեմաներից մեկը՝ ընտանիքի կառուցվածքային հիերարխիայի ճարտարապետությունը, որը հայ իրականության մեջ գրեթե միշտ եղել է ավանդական: Հայկական ընտանիքի գլխավերևում իր իշխող, ավելի հաճախ կառավարող, ղեկավարող, իսկ երբեմն անգամ հրամայող տեսակով կանգնած է եղել տղամարդը՝ ընտանիքի հայրը: Ընտանիքի հոր ընկալումները տարբեր են՝ ամենահոգատարից մինչև դահիճ: Հոգեբանները պնդում են, որ հոր կերպարը վճռորոշ դեր է ունենում երեխաների՝ որպես անհատ ձևավորման հարցում: Դ. Համբարձումյանն իր «Նշան, լեզու, տեքստ» գրքում նշում է. «Գրողը խնամքով թաքցնում է գաղափարական հայացքները, կրոնական ու քաղաքական համոզմունքները՝ դրանք վերագրելով իր կերտած կերպարներին, կամ գրողը համարձակորեն ազդարարում է իր գաղափարական նախասիրությունների, կրոնական ու քաղաքական կողմնորոշման մասին՝ կերտելով կերպարներ, որոնք իր իսկ հայացքների կրողն են: Բայց գրողը նաև ստեղծում է կերպարներ, որոնք չունեն որևէ ընդգծված գաղափարական կողմնորոշում, կրոնական ու քաղաքական համոզմունք, ինչպես և չունի ինքը» (Համբարձումյան 2013: 23): Ուստի պատահական չէ, որ Վ. Վանգերը «Չենչի»-ի մասին իր մենագրության մեջ

անդրադարձել է Կոմս Չենչիի և Շելլիի հոր նմանությանը: Նա մասնավորապես նշել է սեփական որդիներին աջակցել չցանկանալու փաստը և նույնացրել բանաստեղծի հանդեպ իր սեփական հոր՝ Թիմըթի Շելլիի (Timothy Shelley) վերաբերմունքի հետ (Wagner 1903: 49): Տիմոթի և անգամ պատկերացնել, որ նման դաժան կերպար կերտելիս՝ Շելլին մտքում իր հոր կերպարն է ունեցել, թեև զուգահեռությունն ակնհայտ է: Կերպարի տեսակն արդեն իսկ պարզ է նույնիսկ իտալական աղբյուրում: Շելլին իսկապես խոր արհամարհանք էր տածում հոր հիմարության ու պահպանողականության հանդեպ, բայց այդ հատկանիշները չեն ներկայացվել «Չենչի»-ում: Մի կողմից «Չենչի»-ն, ընդհանուր առմամբ, կասկածի տակ է դնում քաղաքակրթության ամենանվիրական արժեքները՝ հեղինակությունը, օրենքը և աստվածային նախախնամությունը, մյուս կողմից Շելլիի պիեսը մերժում է «լինելության մեծ շղթան» (իր հիերարխիկ նախադրյալներով)՝ հայրականությունը, սրբազան սովորույթները և կոդավորված ճշմարտությունը» (Brophy 1970: 241-244): Ստեղծագործության մասին խոսելիս Պ. Բ. Շելլին նշել է, որ նախքան «Չենչի»-ն իր ստեղծագործություններում առավելապես պատկերել է գեղեցիկը և բարին, սակայն այս ստեղծագործության մեջ՝ միմիայն դառը իրականությունը: Այդ դառը իրականության ֆոնին էլ ներկայացվում է իտալական ամենահին ընտանիքներից մեկի՝ Չենչի ընտանիքի քայքայումը: Եթե XVIII-րդ, XIX-րդ դարերում ավանդական ընտանիքի քայքայումը բախտորոշ կամ անթույլատրելի կարող էր համարվել, ապա XXI-րդ դարի ընթերցողին այս խնդրի լուծումը շատ դյուրին կթվա, քանի որ ընտանիքի այս մոդելը, որտեղ հայրն ընտանիքի ղեկավարից վերածվում է հրեշավոր դահիճի, հոգեհարազատ է նաև շատ ընթերցողների, որոնք բազմիցս բախվել են այդ իրականությանը: Կոմս Չենչիի կերպարն անտարբեր չի թողնի հատկապես այն ընթերցողներին, որոնք բախվել կամ բախվում են ընտանեկան նման մոդելի:

Ընտանեկան հիերարխիայի թյուրըմբռնման արդյունքում ընտանիքի հրեշավոր բռնակալի վերածված տղամարդու ճիրաններից փախչել ցանկացող, հասարակական օժանդակության, աջակցության, միջազգային կառույցների հոգածության ձգտող կանանց թիվն առաջադեմ աշխարհի միտումների, XXI-րդ դարի առաջընթացի հակառակ բևեռն է: Մեր օրերում բռնության զոհ կանայք ավելի նախաձեռնող են, դրսևորում են ակտիվություն, ստեղծում են հասարակական կազմակերպություններ, դիմում պատկան մարմիններին, ստեղծում ֆեմինիստական շարժումներ և այլն: Աշխարհում կիրառվող այս փորձի ականատես կամ նաև մաս կազմող XXI-րդ դարի կին ընթերցողի մոտ Չենչիի դուստր Բեատրիչեի կերպարը հակասական

վերաբերմունք կարող է առաջացնել: Ողբերգության մեջ Բեստրիչեն ներկայացվում է որպես բարության, բնության գեղեցկության մարմնացում: Իսկ բնության գեղեցկությունը խորապես գնահատելը ումանտիզմի բնորոշ դիրքորոշումներից է: Ստյուարտ Քարընը Բեստրիչեին անվանում է «բարի հրեշտակ», «իտալական ենթագիտակցության առասպելական կերպար, մարդկային ոգու խորհրդանիշ, որն ապստամբում է այն ամենի դեմ, ինչն անարդար է և բռնի» (Curran 1970: 130): Սակայն ողբերգության 3-րդ գործողության մեջ Բեստրիչեն վերածվում է հաշվենկատ սատանայի, որի սառնասիրտ արարքները մրցակցում էին իր անգութ հոր վայրագությունների հետ: Բերթանդ Էվանսը նրան նմանեցնում է Լեդի Մակբեթին (Evans 1947: 230- 231), իսկ Ռոբերտ Վիթմանը պնդում է, որ չնայած իր պաթետիկ և անհույս վիճակին՝ Բեստրիչեն ինքն իրեն «խորտակում է» Աստծո կամքի ինքնակոչ կատարող դառնալու ճանապարհին, և հետևաբար «Կոմսին սպանելուց հետո ապրում է ինքն իրեն արդարացնելու մոլեռանդությամբ...» (Whitman 1959:249-253): Ըրլ Վասսերմանը փաստում է, որ հայրասպանության իր պատասխանատվությունը Աստծուն թողնելով՝ Բեստրիչեն ընդօրինակում է հորը՝ չընդունելով իր մեղավորությունը, և մոտենում է նրա ոճագործության խորը անդունդին (Wasserman 1971: 81-89): Ըստ Կարլոս Բեյքրի՝ «...Բեստրիչեի դեպքում ողբերգական էր... նրա արդարության սպառազինության ճեղքումը». Շելլիի հերոսուհին 1-ին գործողության մեջ ներկայացված «բարեպաշտ, պարկեշտ, բարեխիղճ, ներողամիտ...» հրեշտակից կերպարանափոխվում է 5-րդ գործողության մեջ պատկերված «ստոր ստախոսի», որը ժխտում է Կոմսի սպանության մեջ իր մասնակցությունը՝ քաջ գիտակցելով, որ նման ժխտումը հանգեցնում է իր հանցակիցների խոշտանգումներին, և որ դրանով դրսևորվում է «...մարդկային սրբության անխուսափելի ապականությունը» (Baker 1948: 147-148):

Կարելի է ենթադրել նաև, որ «Չենչի» ստեղծագործությունը հասկանալու բանալին այն է, թե որքանով ենք մենք Բեստրիչեին պատասխանատու համարում իր արարքների համար: Նա նման է կատալիզատորի, որի միջոցով Կոմսն անգիտակցաբար իրականացնում էր ինքնակործանման իր նենգ կամքը՝ մղում, որը բացահայտվեց մահվանից առաջ իր ամբողջ ունեցվածքը և բոլոր ժառանգներին՝ այդ թվում Բեստրիչեին ոչնչացնելու ցանկության միջոցով: Գլխավոր խորհրդանիշը, որը ներկայացվում է ի պաշտպանություն Բեստրիչեի, ինցեստի գործողությունն է, որն ընկած է պիեսի կառույցի հիմքում (Curran 1970):

Ինցեստը հատուկ է Շելլիի դրամային (և որի շնորհիվ նրա անունը հաճախ տարբեր գրականագիտական աղբյուրներում հանդիպում է Ջ. Բայրոնի անվան կողքին, ում ևս հատուկ էր այս թեմայի արծարծումն իր ստեղծագործությունների մեջ) ոչ թե այն պատճառով, որ «...ինչպես մյուս բոլոր սխալ երևույթները, այն ևս բավականին բանաստեղծական է, այլ այն պատճառով, որ դա կարող է լինել ծայրահեղ սիրո կամ ասելության արդյունք» (Jones 1964: 154): Առավել խորհրդանշական և գեղարվեստական է այն պահը, երբ Կոմսին պաշարած դեր մտնում է դատեր մեջ: Այդ պահից սկսած՝ չար ոգին ականա բնակություն է հաստատում Բեատրիչեի ներսում: Հատկանշական է նաև, որ պիեսում ո՛չ Բեատրիչեն, ո՛չ էլ ընտանիքի անդամներից որևէ մեկը բաց տեքստով չեն խոսում բռնաբարության մասին՝ դրանով իսկ ընդգծելով անձնական ողբերգությունն ու սարսափը: Ընտանեկան բռնության զոհ լինելն ամոթալի համարելով՝ XXI-րդ դարի որոշ կանայք ևս փորձում են թաքցնել այդ իրողությունը, սակայն դրա դեմ պայքարող ժամանակակից ակտիվ կանայք ստեղծում են ֆեմինիստական շարժումներ և իրենց հովանու տակ փորձում վերցնել բռնության զոհ կանանց և պայքարել նրանց իրավունքների համար: Իհարկե, հայ ընտանիքներում ինցեստը հազվադեպ հանդիպող երևույթ է, սակայն, եթե դիտարկենք որպես բռնության ձև, ապա Բեատրիչեի կերպարը կարող է նույնական լինել շատ ընթերցողների պատմությանը:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ Շելլիի ներկայացրած մանեքեռության տեսության համաձայն՝ Կոմս Չենչին ու Բեատրիչեն ակնհայտորեն մարմնավորում են չարն ու բարին: Իսկ չարի մարմնացում Չենչին ակնհայտորեն համոզված է, որ Աստծո ուժին և իշխանությանն է տիրապետում, քանի որ վայելում էր եկեղեցու և իշխանության բարձր հովանավորությունը՝ գործած մեղքերի դիմաց ոսկի նվիրաբերելու, այն է՝ կաշառք տալու շնորհիվ: Եկեղեցուն արվող նվիրաբերությունները, բարեգործությունները կամ եկեղեցաշինությունը, որպես մեղքերի թողության միջոց, արդիական է նաև այժմ: Չենչիի՝ մյուսներին կառավարելու, մանիպուլացնելու և վերահսկելու անհագուրդ փափագը դրսևորվում է սեփական դատեր մարմնի նկատմամբ որոշակի իրավունքներ ունենալու թյուրըմբռնման մեջ: Իր արատավոր տեսակով քանդում է սեփական ընտանիքի հիմքերը, իսկ անելանելի իրավիճակում հայտնված, բռնության զոհ Բեատրիչեն օգնություն փնտրում էր Աստծո և ոչ թե եկեղեցու մեջ: Հաշվի առնելով նրանց հայացքները՝ կարելի է նաև տարբերակել «Չենչիի Աստված» և «Բեատրիչեի Աստված» հասկացությունները: Առաջին դեպքում խոսքը գնում է Ուժի, իսկ երկրորդ դեպքում՝ Արդարության Աստծո մասին: Սա ակներև է դառնում

ողբերգության այն հատվածում, երբ Բեատրիչեն, դիմելով մարդասպաններին, ասում է.

Thou wert **a weapon in the hand of God**

To a just use. Live long and thrive! And, mark,

If thou hast crimes, repent; this **deed** is none. (Shelley 1819: act 4, scene 3, line 48)

Նա խորապես համոզված է և հավատում է, որ Աստված իր արարքը սուրբ կհամարի և ներում կշնորհի իրեն, քանի որ հանցանքը, ինչպես ինքն է անվանում, «արարքը» կատարվել է որպես փրկության միակ միջոց:

Ստեղծագործության դրամատիկ հզոր ոճը Շելլիին առանձնացնում է ոչ միայն XIX-րդ դարի իր մրցակիցներից՝ Բայրոնից և Թենիսոնից, այլ նաև եղիզաբեթյան ժամանակաշրջանի դրամատուրգներից (Bates 1908: 93): Ստեղծագործությունն ունի կիսապատմական սյուժե՝ հարուստ և հզոր փոխաբերական տարրերով: Այն ընթերցողին սովորեցնում է ընդդիմանալ սոցիալական ճնշմանը և ամրապնդել սեփական վճռականությունը, հավատալ, որ անհատի ոգին՝ ռոմանտիկի ոգին, հնարավոր չէ ճնշել կոռումպացված իշխանությունների կողմից՝ որքան էլ վերջիններս հզոր թվան: Շելլին դա ներկայացնում է երկու գլխավոր հերոսներին՝ Բեատրիչեին և Կոմս Չենչիին, փոխաբերական բնութագրեր վերագրելով՝ Բեատրիչեին նույնականացնելով անհատի ոգու, իսկ Չենչիին՝ ուժի ծարավ ոգու և կրոնական ու կառավարական իշխանությունների կոռումպացված ոգու հետ: Ու թեև մարդու էվոլյուցիան, ժամանակաշրջանների միջև ահռելի տարբերությունը, գիտական ու կրթական մակարդակի անհամեմատ ավելի հզոր լինելը ենթադրելու էին, որ XXI-րդ դարի ընթերցողը, ըստ էության, գուցե խորությամբ չընկալեր կամ գոնե չպատկերացներ Շելլիի ստեղծագործության հիմքում ընկած ողբերգական անցքերի դառնությունը, ցավով պետք է փաստել, որ ընտանիքի, արդարության, ուժի և բարոյականության, ուժեղի և թույլի գաղափարները, ինչպես նաև բռնության գաղափարը, որոնք ներկայացված են XIX դարի ստեղծագործության մեջ, արդիական են նաև XXI դարի հայ հասարակության համար: Շելլիի՝ քաղաքական, պատմական և անգամ անձնական կյանքի շրջադարձային փուլերում սեփական տառապանքի և փորձի արդյունքում երկնած այս ստեղծագործությունն այսօր էլ դիպչում է XXI-րդ դարի հայ ընթերցողի հոգու նուրբ լարերին, սակայն պետք է փաստել, որ էնթրոպիկ գեղարվեստական ստեղծագործությունը թերևս անըմբռնելի կամ գուցե չափազանց խրթին լիներ հայ ընթերցողի համար, եթե վերջինիս հասանելի չլիներ ողբերգության հայերեն թարգմանվածքը,

որն իր շքեղությամբ բնավ չի զիջում բնագրին, ավելին՝ բանաստեղծական փայլ և երգեցիկություն է հաղորդում նրան՝ հնարավորություն ընձեռելով անգամ ոչ անգլախոս ընթերցողին ընկղմվել ստեղծագործության մեջ, լսել լույսի ու խավարի հավերժական պայքարի հյուսած մեղեդին, խորությամբ զգալ ընտանեկան կոնստրուկտների քայքայման ցնցումը և կարեկցել բռնության զոհ դարձած կնոջը՝ ներքուստ անհավասար պայքար մղելով նրա ճակատագիրը խեղող կերպարների հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Համբարձումյան Դ. Հ., Նշան, լեզու, տեքստ, Երևան, Զանգակ-97, 2013, էջ 23:
Hambard'owmyan D.H., Nshan, lezow, teqst, Er&an, Zangak-97, 2013, e'j 23
2. Baker, C., Shelley's Major Poetry: The Fabric of a Vision, Princeton, N.J.: Princeton University Press, 1948, pp. 147-148.
3. Bates, E., A Study of Shelley's Drama the Cenci, The Columbia university press, Columbia University Studies in English, New York, Series II. Vol. III, No. 1., 1908, p. 93.
4. Blood, R., "Allegory and Dramatic Representation in 'The Cenci.'" Studies in Romanticism, vol. 33, no. 3, 1994, pp. 355-389. JSTOR, www.jstor.org/stable/25601070. Accessed 25 Mar. 2021.
5. Brophy, Robert J., "'Tamar', 'The Cenci', and Incest." American Literature 42.2 (1970): 241-244. Print.
6. Curran, S., Shelley's Cenci: Scorpions Ringed with Fire, Princeton, N.J.: Princeton Univ. Press, 1970, vi-xii., p. 130.
7. Evans, B., Gothic Drama from Walpole to Shelley, Berkeley: Univ. of California Press, 1947, pp. 230-231.
8. Finn, M. E., "The Ethics and Aesthetics of Shelley's 'The Cenci.'" Studies in Romanticism, vol. 35, no. 2, 1996, pp. 177-197. JSTOR, www.jstor.org/stable/25601165. Accessed 25 Mar. 2021.
9. "Letter to Maria Gisborne, 16 Nov. 1819 (The Letters of Percy Bysshe Shelley, ed. F. L. Jones, London: Oxford Univ. Press, 1964, II, 154).
10. Pfeiffer, K. G., "Landor's Critique of 'The Cenci.'" Studies in Philology, vol. 39, no. 4, 1942, pp. 670-679. JSTOR, www.jstor.org/stable/4172594. Accessed 25 Mar. 2021.
11. Potkay, M. B., "Incest as Theology in Shelley's 'The Cenci.'" The Wordsworth Circle, vol. 35, no. 2, 2004, pp. 57-65. JSTOR, www.jstor.org/stable/24044966. Accessed 25 Mar. 2021.

12. Shelley P., The Cenci: A Tragedy In Five Acts, <http://www.readbookonline.net/title/14324/>
13. Wagner W., German doctoral dissertation: "Shelley's 'The Cenci'", 1903, p. 49.
14. Wasserman, R., Shelley: A Critical Beading, Baltimore: Johns Hopkins Univ. Press, 1971, pp. 81-89.
15. Whitman, W., "Beatrice's 'Pernicious Mistake' in The Cenci," PMLA, 74 (1959), 249-253.

СИРАНУШ ОГАНЕСЯН - ТРАГЕДИЯ "ЧЕНЧИ" П. Б. ШЕЛЛИ ГЛАЗАМИ ЧИТАТЕЛЯ XXI ВЕКА

Ключевые слова: период романтизма, борьба добра и зла, трагедия, инцест, тиран

В статье говорится о литературных взглядах представителя романтического периода П. Б. Шелли, особое внимание обращается на идеологию трагедии "Ченчи". Ключевые вопросы трагедии представлены в свете событий XXI века.

На основе анализа автор приходит к выводу, что темы, затронутые в трагедии, актуальны в XXI веке, особенно акцентируется вечная борьба света и тьмы, разрушение семейных структур и порочное явление равнодушия к голосу женщины - жертвы насилия.

SIRANUSH HOVHANNISYAN - "THE CENCI" TRAGEDY BY P. B. SHELLEY THROUGH THE EYES OF THE XXI CENTURY READER

Keywords: Romantic period, struggle between good and evil, tragedy, incest, tyrant

The article touches upon the literary views of P. B. Shelley, representative of the Romantic period, focusing on the ideology of "The Cenci" tragedy. The core issues of the tragedy are presented in the light of the reality of the XXI century.

Based on the analysis, the author concludes that the topics discussed in the tragedy are relevant in the XXI century, particularly focusing on the eternal struggle between the light and darkness, the destruction of family structures, and the vicious phenomenon of remaining indifferent towards the voice of a woman, within the context of falling victim to violence.

Ներկայացվել է՝ 10.03.2021

Գրախոսվել է՝ 10.03.2021

Երաշխավորվել է ԲՊՀ Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի կողմից՝ 10.03.2021